«Հանուն հավասար իրավունքների» կրթական կենտրոն (ՀՀԻ) ՀԿ-ն և «Հոդված 3» ակումբը, ԱՄՆ ՄԶԳ «Հայաստան Բարեվարքություն» ծրագրի շրջանակներում իրականացնում են «Երիտասարդներն՝ ընդդեմ կոռուպցիայի» մարաթոնը՝ ներառելով քայլերթի, հեծանվաշքերթի, ծաղրանկարների ցուցադրության եւ հայկական ավանդական շուրջպարերի ֆլեշմոբային միջոցառումներ։

Մարաթոնային այս միջոցառմամբ մեկնարկելու է Արդարադատության նախարարության մեկամսյա արշավը՝ նվիրված ազդարարման համակարգի հանրայնացմանն ու կոռուպցիայի դեմ պայքարին։

Հեծանվաշքերթի և քայլերթի մեկնարկը տրվելու է Երևանի Պետական համալսարանից, հետևյալ ուղղություններով՝

Քայլերթի երթուղի. Ալեք Մանուկյան փ.→ Իսահակյան փ. → Աբովյան փ. → Կորյուն փ.→ Չարենց → ԵՊՀ։

Հեծանվաշքերթի երթուղի. Ալեք Մանուկյան փ.→ Իսահակյան փ. → Աբովյան փ. → Կորյուն փ.→ Չարենց → Սայաթ-Նովա փ.→ Մաշտոցի պ. → Ամիրյան → Հանրապետության հրապարակ → Նալբանդյան → Սայաթ-Նովա → Ալեք Մանուկյան →ԵՊՀ (հեծանվաշքերթի պատասխանատու՝ Հեծանվորդների ֆեդերացիայի նախագահ Արման Անտոնյան)։

Մարաթոնի մասնակիցների միջև հայտարարվել է նաև մրցույթ՝ «Լավագույն ուղերձ» կարգախոսով։ Մրցույթին ներկայացված ուղերձներից նախապես կընտրվեն երեքը, որոնց հեղինակներին միջոցառման վերջում կտրվեն մրցանակներ։

Մարաթոնի նախնական օրակարգում նախատեսված են հետևյալ գործողությունները՝

ՄԱՐԱԹՈՆԱՅԻՆ
ՔԱՅԼԵՐԹ ԵՒ ՀԵԾԱՆՎԱՇՔԵՐԹ
ԾԱՂՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՇՈՒՐՋՊԱՐԵՐԻ ՖԼԵՇՄՈԲ

ՇԱԲԱԹ, 16.11.2024

- 14:00 ԵՊՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ԲԱԿ

Վարող՝ լրագրող Ժիրայր Ոսկանյան

Բացման խոսք՝

- Արդարադատության փոխնախարար Կարեն Կարապետյան,
- ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյան,
- ԱՄՆ ՄԶԳ ԱՄՆ ՄԶԳ/Հայաստանի տնօրեն Ջոն Ալելո (հաստատման ենթակա),
- ԱՄՆ ՄԶԳ «Հայաստան բարեվարքություն» ծրագրի ղեկավար Տաճատ Ստեփանյան,
- «Հանուն հավասար իրավունքների» կրթական կենտրոն ՀԿ նախագահ Գայանե Աբրահամյան

14:20 Կոռուպցիայի վերաբերյալ ԾԱՂՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՑՈՒՄ

14: 40 Քայլարշավի եւ հեծանվաշքերթի ՄԵԿՆԱՐԿ

15: 30 Քայլարշավի եւ հեծանվաշքերթի մասնակիցներին շնորհակալական խոսք

- Ուղերձների մրցույթի երեք հաղթողների մրցանակների հանձնում
- Ծաղրանկարների մրցույթի երեք հաղթողների մրցանակների հանձնում
- Փակման խոսք
- Երաժշտություն եւ հայկական ավանդական շուրջպարերի ֆլեշմոբի մեկնարկ

Մարաթոնի մեդիա գործընկերներն են՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը, Շանթ հեռուստաընկերությունը, 1in.am, Factor.am, Ֆոտոլուր: